ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 310-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. սեպտմբերի 2-ի N 68-Ա որոշումը՝
Որոշում եմ.

1. 2022 թվականի դեկտեմբերի 16-ին հայտարարել Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ.Դսեղ, 12-րդ փողոց, թիվ 27 հողամաս հասցեում գտնվող 06-035-0106-0008 կադաստրային ծածկագրի 0.2 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք՝ Մեկնարկային գինը սահմանել 403920 ՀՀ դրամ, աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով,մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով,մասնակցության վճարը՝ 5000 դրամ:

2.Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցներ ի աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող աճուրդ ի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ <<Հայաստանի Հանրապետություն >> օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. նոյեմբերի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 311-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/5 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-035-0106-0010 ԾԱԾԿԱԳՐԻ 1.140524 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ,ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՖԵԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 67-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 6 արձանագրությունը, ըստ որի 2022 թվականի նոյեմբերի 10-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղում գտնվող 06-035-0106-0010 կադաստրային ծածկագրի 1.140524 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Օֆելյա Արշակի Խաչատրյանը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղում գտնվող 06-035-0106-0010 կադաստրային ծածկագրի 1.140524 հա մակերեսով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, որը չի համարվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, օտարել Օֆելյա Արշակի Վարդանյանին՝այսուհետ գնորդ:

2. Սահմանել, որ գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 2 418 573,15 (երկու միլիոն չորս հարյուր տասնութ հազար հինգ հարյուր յոթանասուներեք դրամ տասնհինգ լումա) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265129222 հաշվին:

3. Լիազորել Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ռ. Թորոսյանին՝ հողատարածքի համար ձևավորված գինը վճարելուց հետո, 2-օրյա ժամկետում Թումանյան համայնքի ղեկավարի անունից գնորդի հետ կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:

4. Նախազգուշացնել գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

5.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 312-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԴՍԵՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ», «ԼՈՐՈՒՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»,«ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 31-Ա որոշումը, Լոռու մարզպետի 2022 թվականի նոյեմբերի 01-ի N 01 /106.3.1/08741-2022 և «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ՝ 2022 թվականի նոյեմբերի 04-ի գրությունները՝
Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն»,«Լորուտի նախադպրոցական ուսումնական հաստատություն»,«Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2022 թվականի նոյեմբերի 17 և 18 -ին կայանալիք մրցույթներն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սուրեն Վաչագանի Թումանյան -ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ,համայնքի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան -Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Սամվելի Շահվերդյան - ՀՀ Լոռու մարզպետարանի Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ,

Անահիտ Բարոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության մասնագետ,

Համլետ Քոչարյան- «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 313-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԿԱԼՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿՈՒՂԻ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ,ԱՆԱՍՆԱԳՈՄԻ,ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ,ԽՈՏՀԱՐՔԻ ԵՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ. <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ,ինչպես նաև հաշվի առնելով,որ բնակելի տունը, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15ը, հիմք ընդունելով Չկալով գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 30 նոյեմբերի 1991թ.N 7 արձանագրության քաղվածքը, <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ն կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, հիմք ընդունելով 12.10.2022թ. ըստ ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գործ N 243, N 244 (սեղանամատյան 4530 և 4532) և քաղաքացի Ժիրայր Սարգսի Զալինյանի /մուտք՝ 09.11.2022թ.թիվ 807/ դիմումը՝ Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Ժիրայր Սարգսի Զալինյանի /ծնված՝ 17.07.1947թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով 12-րդ փողոց, բնակելի տուն 69 հասցեում գտնվող 06-089-0030-0002 ծածկագրի 0,10882 հա հողամասի և հողամասում 1965 թվականին կառուցված 46.8 քմ մակերեսով բնակելի տան, 18.8 քմ մակերեսով բնակելի տան նկուղի, 6.6 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի և 10.6 քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ:
2. Վերականգնել և ճանաչել Ժիրայր Սարգսի Զալինյանի /ծնված՝ 17.07.1947թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Չկալովում գտնվող 06-089-0103-0013 կադաստրային ծածկագրով 0.69808 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
3.Վերականգնել և ճանաչել Ժիրայր Սարգսի Զալինյանի /ծնված՝ 17.07.1947թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Չկալովում գտնվող 06-089-0101-0055 կադաստրային ծածկագրով 0.35065 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4.Վերականգնել և ճանաչել Ժիրայր Սարգսի Զալինյանի /ծնված՝ 17.07.1947թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալովում գտնվող 06-089-0125-0035 կադաստրային ծածկագրով 0.56656 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
5.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված

հատակագծերով:
6. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:
7. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
8. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 17
ք.Թումանյան